

ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝

- մետաղաձուլական գործարանները,
- արդյունաբերական և կենցաղային թափոնները,
- գյուղատնտեսությունը,
- տրանսպորտը և այլն:

Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում: Այնուհետև դրանց մի մասը անցնելով ջրային միջավայր, կլանվում է բույսերի կողմից և հայտնվում սննդային շղթայում: Հողի արդյունաբերական աղտոտման հիմնական աղբյուրներն են մետաղաձուլական գործարանների և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափոնները: Նման աղտոտումները կարող են առաջացնել հողի աղտոտվածություն ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով:

Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն:



2022 թվականի 2-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Տավուշի, Կոտայքի, Արարատի, Վայոց ձորի և Լոռու մարզերում:

Տավուշի մարզում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹ-ն՝ 1.3 անգամ, պղնձի պարունակությունը՝ 14.7-35.0 անգամ, ցինկի պարունակությունը՝ 5.9-8.4 անգամ, քրոմի պարունակությունը՝ 7.3-16.2 անգամ, նիկելի պարունակությունը՝ 8.0-10.3 անգամ և արսենի պարունակությունը՝ 4.0-19.5 անգամ:

Կոտայքի մարզում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹ-ն՝ 1.5-2.0 անգամ, պղնձի պարունակությունը՝ 17.0-46.3 անգամ, ցինկի պարունակությունը՝ 5.1-12.7 անգամ, քրոմի պարունակությունը՝ 4.3-26.7 անգամ, նիկելի պարունակությունը՝ 9.3-28.0 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.3-2.1 անգամ և արսենի պարունակությունը՝ 2.5-10.0 անգամ:



Արարատի մարզում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹ-ն՝ 1.2 անգամ, պղնձի պարունակությունը՝ 11.0-14.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 2.9-4.3 անգամ, քրոմի պարունակությունը՝ 8.0-11.3 անգամ, նիկելի պարունակությունը՝ 13.8-17.5 անգամ և արսենի պարունակությունը՝ 3.5-6.5 անգամ:

Վայոց ձորի մարզում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹ-ն՝ 1.5-2.9 անգամ, պղնձի պարունակությունը՝ 25.0-74.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 3.5-6.7 անգամ, քրոմի պարունակությունը՝ 1.7-15.3 անգամ, նիկելի պարունակությունը՝ 4.8-13.8 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.1-1.4 անգամ և արսենի պարունակությունը՝ 3.5-6.5 անգամ:



Հողերում մետաղների պարունակությունը

Լոռու մարզում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹ-ն՝ 1.3-7.1 անգամ, պղնձի պարունակությունը՝ 16.4-1760.3 անգամ, ցինկի պարունակությունը՝ 2.6-55.9 անգամ, քրոմի պարունակությունը՝ 1.7-16.2 անգամ, նիկելի պարունակությունը՝ 2.9-19.3 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.1-27.6 անգամ և արսենի պարունակությունը՝ 2.5-37.9 անգամ:



Լոռու մարզի հողերում մետաղների պարունակությունը